

Notwendige. Viele wertvollste historische Zeugnisse sind uns durch zu rigorose, gut gemeinte aber wirklich nicht immer notwendig gewesene Eingriffe für immer verloren. In diesem Zusammenhang sei auf den einmaligen Artikel von Ch. Beintker<sup>7</sup> und die „Gedanken zur Minimalintervention am Buch“ von P. Engel<sup>8</sup> verwiesen. Beintker thematisiert zwar nicht das armenische Buch, sondern stellt an Hand der Restaurierung von westeuropäischen Kodizes diverse praktische Verfahren zum Minimaleingriff vor, mit ein wenig Phantasie lassen sie sich aber auf andere Kodextypen übertragen.

Der Minimaleingriff stellt eine ideale restauratorische Position dar. Er ist ein Eingriff, das bedeutet er ist weit entfernt von dem teilweise zurzeit ebenfalls praktizierten Entziehen aus der restauratorischen Verantwortung, indem viel dokumentiert und wenig getan wird. Er setzt aber nur dort ein, wo es wirklich zum Wohle des Buches nötig ist, und lässt den Rest unberührt.

Mehr und mehr setzten sich Minimalintervention und präventive Konservierung bereits in den Gedanken der Kuratoren und Restauratoren weltweit durch. Es wäre zu wünschen, dass durch diese Geisteshaltung möglichst viele unserer bedeutenden Kulturschätze in authentischen Status an kommende Generationen weitergegeben werden können.

**ANMERKUNGEN**

- 1 J. A. Szirmai, *The Archaeology of Medieval Book-binding*, Verlag: Ashgate, Aldershot, 1999
- 2 Hauptkatalog der Armenischen Handschriften Hgg.: Wiener Mechitaristen-Congregation, Mechitaristen Buchdruckerei, Wien 1895
- 3 Liste der untersuchten Codices: 350, 20, 306, 507, 50, 412, 28, 34, 411, 69, 159, 66, 432, 354, 333, 124, 331, 419, 505, 143, 55, 113, 293, 434, 324,

241, 316, 166, 524, 312, 313, 309, 308, 280, 60, 59, 240, 3.

- 4 J. A. Szirmai, *The Archaeology of Medieval Book-binding*, Verlag: Ashgate, Aldershot, 1999
- 5 diese beiden Ledersorten lassen sich nicht ohne weiteres unterscheiden, da diese beiden Tiere gekreuzt werden können
- 6 In Fällen in denen Teile verloren oder durch Restaurierung unkenntlich gemacht waren, sind sie nicht in die zusammenfassende Tabelle aufgenommen, da die Tabelle keine Dokumentation des Zustandes der Bücher ist, sondern eine Zusammenfassung typischer armenischer Charakteristika an den untersuchten Büchern.
- 7 Beintker Christian, *Der Minimaleingriff in der Buchrestaurierung*, in Restauo, vol 104 (1998) Nr. 4, 272 - 278
- 8 Engel Patricia, *Weniger ist mehr: Gedanken zur Minimalintervention am Buch*, in Papierrestaurierung, vol 4 (2003) Nr. 2, 35-36

**Հ. ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆԻ ԵՒ Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ՈՍԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՐՈՏԵԱՆԻՆ**

Գեորգ Տեր-Վարդանեսան

2004 թ. Օգոստոսի վերջին Ս. Ղազարում նախնական մշակման ենթարկեցինք Յարութիւն Քիւրտեանի անձնական թողոնը (արխիւ), որը Վենետիկ էր հասել նրա ձեռագրական եւ թանգարանային հարուստ հաւաքածոյի հետ: Այստեղ «2.1» պայմանանիշով նշանակել ենք «Քիւրտեանի ստացած նամակներ եւ բացիկները»-ը. նամակները 72 միաւոր են, բացիկները՝ 17. Ժամանակագրական ծայրային թուականներն են՝ 27 Մայիսի 1921 թ. - 14 Մայիսի 1971 թ.: Առանձնապէս նամակների սակաւութիւնը շատ զարմանալի է, քանզի Քիւրտեանն իր իսկ ձեռքով հրատարակել է միայն Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Ա. Յովսէփեան կաթողիկոսից իր ստացած 31 նամակ: Այսուհանդերձ, Վենետիկում մեր տեսածն այսչափ էր, աւելին՝ նրանց մէջ գիտական արժէք ունեն միայն Հ. Ն. Ակինեանի գրած 7 նամակ եւ Հ. Հ. Ոսկեանից ստացուած 2 բացիկ, որոնք եւ հրատարակուած ենք ներկայովս:

Նամակների ընդհանուր բնութագիր-գնահատականը հետեւեալն է. երիտասարդ հնահաւաք-բանասէր Յարութիւն Քիւրտեանը «Հանդէս ամսօրեայ»-ին յօդուածներ է ուղարկում եւ խնդրում նոյն «Հանդէս»-ի իրեն անհրաժեշտ համարներ կամ գրքեր: Վաղուց արդէն հմուտ եւ հռչակաւոր բանասէր Հ. Ն. Ակինեանը, որպէս կանոն, յօդուածները տպագրութեան համար անբաւարար է համարում եւ վերադարձնում<sup>2</sup> (մանրամասների մէջ չի մտնում, բաւարարում է ընդհանուր դիտողութիւններով), միւս կողմից յայտնում է «Հանդէս»-ի խնդրուած համարների եւ գրքերի գները, կազմակերպում նրանց ա-

ռաքումը եւ յետոյ տեղեկացնում վճարը ստացած լինելու մասին: Խօսակցութիւնն աւարտում է Ն. Ակինեանի՝ 1934 թ. Սեպտեմբերի 28-ի առաջարկով, ըստ որի, որպէս «Հանդէս»-ի 1933-1942 տարիների բաժանորդագին եւ որպէս փոխանակում, Քիւրտեանը պէտք է իր ունեցած երեք արժէքաւոր ձեռագիր տար Միխիթարեանց Վիեննայի Մատենադարանին:

Զգիտենք՝ սրանից յետոյ այլ խօսակցութիւն եղե՞լ է արդեօք. այսուհանդերձ, հրապարակուող նամակները մեր գիտութեան պատմութեան համար որոշակի արժէք ունեն. հեղինակն իր արդէն տպագրուած կամ ընթացքի մէջ գտնուող հետազոտութիւնների մասին հաղորդում է ուշագրաւ մանրամասներ, արտայայտում է տարբեր բնագրերի վերաբերող կարծիքներ, միաժամանակ երիտասարդ հասցէատիրոջը յուշում է կարգալ անհրաժեշտ գրականութիւն՝ գրքեր կամ յօդուածներ, առաւել շատ տալիս է ձեռագրեր նկարագրելու համար կարեւոր հրահանգներ եւ ցուցումներ, որոնք, իրենց պատմական արժէքից զատ, մեր ներկայի եւ ապագայի երիտասարդ բանասէր-ձեռագրագէտների համար ուսուցողական նշանակութիւն ունեն: Եւ ահա, նամակների այս վերջին, հիմնական արժէքի ու մնացեալ արժանիքների համար անհրաժեշտ համարեցինք ներկայ հրապարակումը:

Հ. Հ. Ոսկեանի բացիկների նիւթը եւս նոյնն է, բայց ընդամէնը երկու բացիկի մէջ, բնականաբար, ընդարձակ խօսակցութիւն լինել չէր կարող, այսինքն՝ «Հանդէս»-ի խմբագրի առունին համառօտ պատասխաններ են՝ հասցէատիրոջ համար

կարեւորագոյն հարցերի: Այսուհանդերձ, սրանք ինչ-որ չափով լրացնում են Քիւրտեանի հետ «Հանդէս»-ի ունեցած խօսակցութեան պատկերը (այն հասցնելով 1967-ի կէսերին), ուստի եւ յանուն լրութեան տպագրում ենք նաեւ սրանք:

Ակիւնեանի նամակները գրուած են 28,3x22,1 սմ չափսի պաշտօնաթղթերի վրայ, թերթերի առաջին երեսի ձախ անկիւնում տպուած է. «Խմբագրութիւն Հանդէս ամսօրեայ ուսումնաթերթի. Redaction de la revue Handes amsorya, Vienne (Autrice), VII/2 Mechitaristengasse 4»: Բոլորը մէկական թերթ են, միայն է. նամակը 2 թերթ է, ըստ էութեան, 21,8x13,8 չափսի 2 թերթ է նաեւ Դ. միակորը, որ ստացուած քառակուսի գծումներով 27,7x21,8 չափսի մի թերթի երկծալումով: Գրուած են թերթերի երկու երեսները, երբեմն լուսանցներում յաւելումներ են արուած: Առաջին երեքի եւ եօթերորդի թուղթը խիստ մաշուած է, երկրորդինը՝ նաեւ խոնաւութիւն տեսած եւ մասամբ գունաթափուած: Թերթերը տողուած են գործարանային ստուերագծումներով:

Հ. Հ. Ոսկեանի առաջին բացիկը 15x10,1 չափսի է, երկրորդը՝ 14,9x10,5. սրանք եւս ունեն «Խմբագրութիւն «Հանդէս ամսօրեայ» ուսումնաթերթի» եւ «Խմբագրութիւն Հանդէս ամսօրեայի» տպագիր սկսուածքները:

Նամակները վերարտադրել ենք լիովին նոյնաբար՝ պահպանելով նաեւ կէտադրութիւնը: Ծանօթագրել ենք միայն ամենաանհրաժեշտ կարեւորագոյնները: Նամակների մէջ առկայ ընդգծումները հեղինակներին են:

Ա.

Վիեննա, 27 Մայիս 1921

Մեծապատիւ պր. Յ Քիրտեան

Ստացայ Ձեր 1 Մայիս թուակիրն ներփակեալ յօդուածով: Շնորհակալութիւն ձեր համակրական զգածմանց:

Ցաւ ի սիրտ պիտի յայտնեմ, որ Ձեր յօդուածը կարելի պիտի չըլլայ հրատարակել «Հանդիսի» մէջ: Նիւթն թէեւ հետաքրքրական է եւ յարմար մեր ուսումնաթերթին, բայց գրութեան եղանակը չի համապատասխաներ մեր ուղղութեան: Անհրաժեշտ են աղբերաց մանրակրկիտ քննութիւն եւ ցուցմունք, նոյնպէս վանքին արձանագրութեան բնագիրը բաղձալի էր ունենալ ամբողջութեամբ: Չէ բացատրուած նոյնպէս, թէ ինչո՞ւ Մ. Ուուհայեցի ծագումն վրական կը համարի, մինչ արտաքինք հայ գիտեն: Եթէ այս կէտերն քննէք բանասիրօրէն՝ հիմնուած հին աղբիւրներու վրայ՝ սիրով պիտի հրատարակենք Ձեր ուսումնասիրութիւնը: Այս նկարագիրն կը պահանջուի նախ Ձեր ձեռնարկած «Բուլգարահայ գաղթականութեան պատմութէն»<sup>3</sup>:

Շատ ուրախ պիտի ըլլանք եւ երախտապարտ, եթէ առաքէք Մատենադարանիս Ձեր տեսած ձեռագիրներու մանրամասն ցուցակը նկարագրութեամբ արտաքնոյն, բովանդակութեան եւ արտագրութեամբ յիշատակարաններու:

Անոնք կրնան օր մը ի մի հաւաքուելով հրատարակուիլ առանձին հատորով ալ:

«Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի»<sup>4</sup> յանձնեցի մեր գրավաճառութեան որ առաքէ Ձեզ: Պիտի խնդրէի որ դրամն առաքէք ուղղակի – չեքով (տոլար կամ ֆրանք) կամ ներփակ նամակի մէջ:

Ունի՞ք տրամադրելի «Ապագայ» թերթէն<sup>5</sup> (ձեռագիր), զոր չունինք մեր հաւաքման մէջ:

Յարգանքներով  
Հ. Ն. Ակիւնեան

Խմբագր. Հանդիսի

Յ. Գ. Աշխատեցէք գտնել «Հանդիսի» նոր բաժանորդներ քաղաքը, ուր այնպէս սակաւաթիւ են մեր բաժանորդները: 2 տոլար տարեկան:  
Նոյն

Բ.

Վիեննա, 17 Հոկտեմբեր 1921

Մեծապատիւ պր. Յ Քիրտեան

Ինձ ներողամիտ պիտի ըլլաք եթէ մինչեւ օրս չկարողացայ պատասխանել Ձեր գրութեանց: Ժամանակաւոր բացակայութիւնս քաղաքէս եւ այլ զբաղմունք թոյլ չտուին ինձ ուշադիր աչքով անցնել Ձեր առաքած յօդուածներու վրայէն:

Պաղտասար Դպրի մասին Ձեզի անծանօթ մնացած է Հ. Մ. Պոտուրեանի յօդուածն «Բազմավէպի» մէջ՝ 1912, էջ<sup>6</sup>, ուր ամփոփուած են կենսագրական գծեր նոյն հեղինակի մասին եւ ցանկ մը անոր աշխատութեանց: Շատ կը ցաւիմ որ Նոր աշխարհի մէջ առ ի չգոյէ հայկ[ական] մատենադարանաց դիւրութիւն չունիք ծանօթանալու կարեւոր աշխատանքներու, իսկ Հանդիսի մէջ լոյս տեսած յօդուածները պէտք են անպատճառ հիմնուած ըլլալ բոլոր նախորդ քննութեանց վրայ եւ անոնց պակասներն լրացնել: Վստահ եմ թէ ինձ պիտի ներէք եթէ այսպիսի նկատումով վերադարձնեմ Ձեր աշխատութիւնն:

Ձեռագրաց ցուցակը լաւ է եւ կրնայ տպագրուիլ: Բայց կը փութամ ըսել, թէ դա երկար ժամանակ պիտի սպասէ կարգին, որովհետեւ այժմ ունիմ տպագրութեան համար 1. Քօսեան՝ Յուլիանի հայ[երէն] ձե-

ռագրաց կարնոյ եւ գիւղորէից, 2. Գուշակեան, Յուլիանի հայ[երէն] ձեռագրաց Սեբաստիոյ, 3. Աճառեան, Յուլիանի հայ[երէն] ձեռագրաց թեհրանի, 4. Համաճեան, ցուցակ հայ[երէն] ձեռագրաց Գաղատիոյ<sup>7</sup>: Մինչեւ որ ասոնք ի կարգին տպագրուին, կրնաք Ձեր աշխատութիւնն օր աւուր աւելի ընդարձակել, ճոխացնել ձեռագրաց թուով, որպէսզի ժամանակին հնարաւոր ըլլայ առանձին հատորով ալ լոյս հանել: Առանձնապէս պիտի խնդրէի, որ, եթէ կարելի է, մանրամասնաբար տայիք ինչ ինչ ձեռագրաց բովանդակութիւնը. այսպէս թ. 4 Մաշտոցի բովանդակութիւնը չէ տրուած, թ. 6 Տաղարանը պէտք է մանրամասն նկարագրել, տալով մէն մի տաղի խորագիրն եւ սկզբնաւորութիւնը<sup>8</sup>: Այսպէս նաեւ միւս ցուցակագրեալ ձեռագիրները: Եթէ ունիք ձեռքի տակ մեր Մատենադարանի ձեռագրաց ցուցակը, շատ բան կրնաք համեմատել անոր հետ եւ նշանակել, թէ բովանդակութեամբ այս կամ այն ձեռագիրն հետ նոյն է եւն: Դարձեալ պիտի խնդրէի որ որչափ կարելի է մաքուր գրով եւ նոյն թանաքով գրուած ըլլան յօդուածները, որովհետեւ մեր գրաշարներն գերմանացի են, եւ դժուար է ձեռագրին ուղղագրութիւնն եւն գուշակելով դուրս բերել: Եթէ պէտք է կրնամ Ձեր աշխատութիւնն ետ խաւրել, անոր վրայ դեռ աշխատելու համար: Դուք շարունակեցէ՛ք ցուցակագրել մատչելի բոլոր ձեռագիրները եւ խաւրեցէք խմբագրութեանս, շուտ կամ ուշ անպատճառ կը տպագրուին:

Gottlob Hess գրավաճառի քով գտնուած ձեռագիրն ծախուած է արդէն: Բայց եթէ կը փափագիք ձեռագիր գնել, ներկայիս Karl W. Hiersemann ի Leipzig, Konigstr. 29 կը ծախէ հայերէն Համայն մի 1676 թուէն, 3600 mark, Շարակնոց մը Ժէ. դարէ, 5800 mark:

Ձեր ուզած Հանդեսներն խաւրոկեցան ժամանակին: 50 Քր. նախորդ շաբաթ ընդունած եմ շնորհակալութեամբ:

Այսօրուան ծրարով կ'ուղարկուի Ձեզ 2 օր. Հանդէս 1921, թ. 1-8. շարունակութիւնն ժամանակին<sup>9</sup>: Նոր Հաշիւն կը գտնէք ներփակ: Կոստանեանցի Հրատարակութիւններէն ունիմ միայն Մ. Նաղաշ, Գր. Աղթամարցի եւ Նոր ժողովածու միջնադարեան տաղերու, Ա., Բ.<sup>10</sup>: Իսկ «Դիւան Հայոց պատմութեան» Հրատարակութեան տրամադրելի են Հտր. Ը.-Ժ.<sup>11</sup> (երեք Հատոր, ա.՝ 20 Քր., երեքն ի միասին 60 Քր.):

Յարգանք եւ սիրով՝  
Հ. Ն. Ակիւնեան

Գ.

Վիեննա, 27 Յունուար 1924

Սիրելի պր. Յ. Քիրքմեան

Միշտ աչքիս առջին էին Ձեր 4 Նոյ. եւ 31 Դեկտ. 1921 թուակիր պատուականները, որոնց պատասխան տալ կը փափագէի մանրամասն ծանօթանալով Ձեռագրաց ցուցակի եւ «Բագարճիքի Հայ գաղութը» յօդուածի<sup>12</sup> մասին: Բայց ահա անցան տարիներ, եւ ես Հնարաւորութիւն չունեցայ անդրադառնալու Ձեր նամակներուն եւ խնդրոյն: Օրերս ծանրաբեռնուած են բազմադիմի խնդիրներով, պարապոյ ժամ գտնել անկարելի կ'ըլլայ: Այս անգամ եւս պիտի չկարենամ զբաղիլ Պագարճիքի Հայ գաղութով, բայց կ'ուզեմ քանի մը խօսք ընել ձեռագրաց ցուցակի մասին:

Վերջին անգամ զրկած էիք Տաղարանի մը ցուցակը, այս Տաղարանը իւր բովանդակութեամբ շատ հետաքրքրական է, բայց անբաւական ցուցակագրութիւնը: Կ'ուզէի քանիցս գրել Ձեզ այս մասին: Եթէ Տաղարանը քովերնիդ է տակաւին, պիտի խնդրէի որ անգամ մ' եւս ցուցակագրէք զայն մանրամասն յառաջ բերելով իւրաքանչիւր տաղին՝ 1. խորագիրը, 2. սկզբնաւորութիւնը, երկու կամ չորս տող, տեղ տեղ նաեւ վերջաւորութիւնը՝ եթէ կը յիշուի Հոն Հեղինակը կամ ժամանակը, 3. պէտք է նշանակել նաեւ տաղերու տնակապ գրերը, «Ճ-Ք», կամ եթէ Հեղինակի անունը կը կապէ: Ասոնք կարեւոր են իմանալու համար, թէ ի՞նչ ծանօթ եւ անծանօթ տաղեր կան Հոն: Առ հասարակ ուշադիր ըլլալու է ցուցակագրութեան ժամանակ ձեռագիրներու բովանդակութեան, յառաջ բերելով մէն մի նոր գրութեան խորագիրն եւ սկզբնաւորութիւնը: Նկարագրեցէք ըստ կարելոյն ընդարձակ, աւելորդն կրնամ ջնջել եւ Հոս: Կարեւոր է նաեւ որ ցուցակագրութեան ժամանակ կիրարկէք ընթեռնելի գիր, որոշ, պարզ, որպէսզի տպագրութեան ժամանակ սխալմունք տեղի չունենայ: Կը յուսամ թէ այս միջոցին շարունակած էք ցուցակագրել ուրիշ ձեռագիրներ ալ:

Բուզարահայոց պատմութեան ուսումնասիրութեան համար կան ցրիւ նիւթեր, բայց ինձ անկարելի է այժմ մատնացոյց ընել զանոնք: Պէտք է աչքէ անցնել իմ «Յիշատակարաններու Հաւաքածոյք», իբր 20.000 կտոր<sup>13</sup>: Եթէ Ձեր գործն աւարտած է արդէն, կրնաք յղել ինձ ի քննութիւն: Ձեր ձեռագիրները քովս են, կ'ուզեմ դեռ քննել: Եթէ անպատճառ ետ կ'ուզէք, կը զրկեմ:

Պիտի խնդրեմ, որ չնեղանաք նամակիս ուշանալուն համար: Մոռցած էի ժամանակին զրկել Ձեզ Կոստանեանցի Հրատարակութիւններէն ինչ ինչ. եթէ կը փափագիք ունենալ նաեւ այժմ, զրկեմ:

Ձանացէ՛ք գտնել բաժանորդներ «Հանդէսի» համար, նոյնպէս բաժանորդներ Ստրչիգովսկիի Հայկական ճարտարապետութեան<sup>14</sup> համար (գինն՝ 13 տոլար):

Սիրով՝  
Հ. Ն. Ակիւնեան

Դ.

Վիեննա. 10 Փետր. 1930

Սիրելի Յ. Քիրքմեան

Քո նամակներն առ Մեծ. Հ. Գարանֆիլեան<sup>15</sup> յանձնած էին ինձ պատասխանելու, անոնց վրայ եկան աւելցան նաեւ քո ինձ գրածները: Իմ պատասխանը, գիտեմ շատ ուշացաւ, եւ դու ալ շատ շատ նեղացար: Պիտի խնդրեմ որ ներես ինձ այս անուշադրութիւնս: Ես ուզեցի բոլոր խնդիրներդ մի առ մի կատարել եւ այնպէս պատասխանել, բայց այս չյաջողեցաւ ինձ մինչեւ այսօր, շատ էի զբաղած գրելով եւ խմբագրական եւ այլ գործերով:

Վերջին գրութիւնդ կը դրդէ զիս խզել լուրթիւնս, եւ ես ահա կու գամ ուրախութեամբ պատասխանելու ամէնուն մէկ անգամէն:

1. Հանդէս Ամս. 1925, թ. 1-2, 1926, թ. 1-2 կը յանձնեմ այսօր թղթատարին:

2. Լալայեանի ցուցակէն<sup>16</sup> արտագրութիւնը պիտի գտնես ներփակ:

3-4. Բիւզանդիոնի<sup>17</sup> թ. 1446էն արտագրութիւնը կը հոգամ մէկ երկու օրէն: Նոյն ժամանակ կը հաղորդեմ քեզ պր. Աղաճանեանի հետ տեսակցութեանս արդիւնքը լուսանկարներու մասին:

5. Պաղտատի Հնութիւններու մասին յօդուածը<sup>18</sup> նախորդ խմբագրութիւնը յանձնած էր այնպէս ինչպէս վերագործուցած էիր՝ տպարան շարելու, նաեւ շարուած պատրաստ էր տպագրութեան Հանդիսի թ. 11-1ի համար, բայց վերջին պահուն նկատուեցաւ որ յիշատակարաններու արտագրութիւնը շատ անճիշդ կատարուած է. այնպիսի անուններ դուրս ելած են, որոնք այլուստ անծանօթ են, չլսուած անուններ: Հարկ եղաւ ամբողջ յօդուածն դուրս ձգել, մինչեւ որ տեղն ու տեղն ճշգրտին ընթերցուածները: Առաջիկայ թղթատարով կ'ուղարկեմ քեզ օրինակ մի

խնդրանօք, որ ի Պաղտատ ծանօթի մը միջոցաւ վերաքննել տաս ընթերցուածները: Յայտնի կը տեսնուի, թէ աճապարանօք արտագրած ես յիշատակարանները եւ արձանագրութիւնները:

6. Սպէնսըրի Աւետարանին նկարագրութիւնը<sup>19</sup> ստացած եմ, բայց առ այժմ չեմ կարող հրատարակել զայն: Անկէ գտայ ուրիշ օրինակ մ'ալ Հանդիսի Հին թղթերու մէջ, ուղարկուած 6-7 տարի առաջ: Դժբախտաբար երկուքին մէջ ալ զանց ես ըրած նշանակել ձեռագրին թղթահամարները իւրաքանչիւր տաղին քով: Չայս կը վերագործնեմ, խնդրանօք որ աւելցնես թղթահամարները:

Կը յանձնեմ ցուցակագրութեան համար Ձեր ուշադրութեան հետեւեալ կէտերը. 1. Իւրաքանչիւր ձեռագրին մէջ պէտք ես դնել պիտակ մը, նշանակելով վրան համարը կամ թիւը. «Ձեռագիրք Յ. Քիրքմեանի թիւ 1...»:

2. Իւրաքանչիւր ձեռագիր պէտք է ունենալ իւր թղթահամարները այսպէս՝ 1, 2, 3... իւրաքանչիւր թղթին ստորեւ աջ անկիւնը, մատիտով (թղթահամար եւ ո՛չ իջահամար), որպէս զի ամէն ժամանակի համար արժէ քո ցուցակագրութիւնը թուով եւ թղթահամարով:

Պիտի չնեղանաս, եթէ ըսեմ որ այս ցուցակագրութիւնը պիտի չկարողանանք ամբողջապէս հրատարակել Հանդիսի մէջ, որովհետեւ ունենք ձեռքի տակ Թորգոմ Սրբազանի Սեբաստիոյ ձեռագրաց ցուցակը<sup>20</sup>, զոր հարկաւ պէտք է ի վերջոյ տպել վերջացնել: Ինչպէս ուրիշները, նոյնպէս դուք պէտք էք սպասել կարգի: Շատ լաւ պիտի ըլլար եթէ նախորդ խմբագրութիւնս չաճապարէր հրատարակել ցուցակիդ հրատարակութիւնը<sup>21</sup>, այլ սպասէր դեռ մի ժամանակ եւ այնպէս ձեռնարկէր տպագրութիւնը, ցուցակին աւարտելէն ետքը, որպէս զի առանձին գրքով ալ լոյս տեսնէր Հայերէն եւ անգլիերէն: Մենք սովոր ենք

այսպիսի ցուցակներ առանձին ալ արտատպել:

Տաղերէն եթէ թիւ 79, 82, 88, 136, նաեւ 51 եւ 64 արտագրես<sup>22</sup> խնամով եւ ուղարկես ինձ, շնորհակալ կ'ըլլամ: Վերջին երկուքը կրնամ համեմատել իմ օրինակներու հետ: Չանոնք պիտի հրատարակեմ Գրիգորիս Աղթամարցւոյ տաղերուն կից: Իսկ առաջինները պէտք են Քուչակեան տաղերու քննական հրատարակութեան համար:

Միշտ սիրով քո՝  
Հ. Ն. Ակինեան

Ե.

Վիեննա 14 Մարտ 1931

Սիրելի բարեկամ

Ձեր պատուական գրութիւնները կարգացած եմ ժամանակին մեծ հաճոյքով, բայց պատասխանել չէի կրցած, ոչ թէ չկամէութեամբ, այլ միշտ յուսով թէ պիտի գտնեմ ազատ ժամանակ համով հոտով ուսումնասիրելու Ձեր գիտական հարցերը եւ այնպէս մանրամասնօրէն գրելու Ձեզ բոլոր կէտերու շուրջը: Բայց այդ ժամանակը երբեք չժպտաց ինձ, եւ ոչ նաեւ այժմ: Գրիգորիս Աղթամարցւոյ տաղերուն եւ Ձեր Տաղարանի բովանդակութեան պիտի անդրադառնամ ուրիշ անգամ:

Անցեալ Նոյեմբ.-Փետր. ամիսները անցուցի ես Գերմանիա եւ Գաղղիա, ուսումնասիրելու Մատենադարաններու մէջ եւ գրավաճառներու քով գտնուած հայերէն ձեռագիրները: Տեսայ աւելի քան 500 ձեռագիր: Վերադարձիս ձեռք առի եղիշէի Վարդանանց պատմութիւնը ուսումնասիրելու: Եւ որովհետեւ հասայ ծանրակշիռ եզրակացութեան մը, հարկ եղաւ ապրիլ բոլոր ժամանակ այդ խնդրի մէջ: Երէկ միայն հնարաւոր եղաւ ուսումնասիրութեանս Ա. մասն յանձնել տպարան, լոյս տեսնելու Հանդիսի 1-2 թիւերուն մէջ:

Բուն հարցն Բ. մասին մէջ է, ուր պիտի ապացուցանեմ, թէ Եղիշէի Պատմութեան սկզբնագիրն պատմութիւնն էր 572ի «Հայոց պատերազմի», յետոյ միայն շրջուած է Վարդանանց պատմութիւն:

Ձեռք չառած Բ. մասին քննութիւնը կը փութամ պատասխանել Ձեր վերջին պատուականին, յայտնելու համար թէ «Հայերէն նշանագիրներ» յօդուածը չենք կրնար հրատարակել ի Հանդիսի, որովհետեւ հոն այս մասին շատ է գրուած նախ, եւ ապա մեծ ծախքի կը կարօտի նշանագիրներու կլիշէն պատրաստել: Ուստի խնդրելով Ձեր ներողամտութիւնը՝ կը վերադարձնեմ զայն Ձեզ, խորհուրդ տալով, որ եթէ այլուր հրատարակել ուզէք, լաւագոյն կ[ը]նէք ձեռագրին այն էջերն լուսանկարել տալով կլիշէի վերածէք եւ այնպէս նմանատիպ լոյս հանէք: Աւելի արժէք պիտի ունենայ իբրեւ հին ձեռագիր, նաեւ հրատարակչին աւելի աժան պիտի նստի:

«Նշոյլ» ամսագրի 23 թ. 4, 5, 6 տետրներու համար շնորհակալութիւն, չունէինք մենք զանոնք. եթէ 1-3 եւ 7 եւս գտնէք եւ ուղարկէք մեզ, աւելի շնորհակալ պիտի ըլլանք:

Այցելութիւնդ ի Վիեննա պիտի առթէ մեզ միւսանգամ ուրախութեան, այն ժամանակ պիտի ունենանք ազատ ժամանակ զրուցելու իրարու հետ երկար: Եթէ այս առթիւ Տաղարաններդ բերէք հետերնիդ, որպէսզի աչք մը նետեմ անոնց վրայ, շատ լաւ պիտի ըլլայ:

Սիրելի բարեկամ, մի նեղանար եթէ նամակներուդ պատասխանը ուշացաւ, գիտցիր զիս միշտ սիրով հանդէպ քեզ, եւ միշտ պատրաստակամ՝

Հ. Ն. Ակինեան

2.  
Վիեննա 14 Մարտ 1932

Սիրելի բարեկամ

Շատ անգամ ուզած եմ գրիչ ձեռք առնել եւ խօսիլ Ձեզ հետ, բայց բախած եմ միշտ արգելքի: Թէպէտ դուք խոսափեցաք առթիւ Ձեր այցելութեան ի Վիեննա ողջունել զիս անձամբ, բայց ես դարձեալ յօժար էի գրել առ Ձեզ, մանաւանդ երբ հասաւ ականջիս թէ ամուսնացած էք, ուրախութեան իսկ պարտք էր ինձ փութալ եւ արտայայտել խնդակցութիւնս հանդերձ մաղթանօք, որ երջանկաբեր ըլլար պսակն Ձեր ճակատին: Ինչ որ նկատուեցաւ զանցառութիւն, թող ըլլայ այժմ անուշի կապուած. ընդունեցէք մաղթանքներս իբրեւ թարմ ուղերձներ: Անցնինք այժմ գործի: Խմբագրութեանս երիտասարդ անդամի մը թիւրիմացութեան արդիւնքն է «Հանդէս ամսօրեայի» առաջման դադարեցումը, կարգադրած եմ որ անյապաղ հասցնէ ձեզ պակաս թուերը:

Կ. Պոլիս Ձեր տեսած եւ ցուցակագրած ձեռագիրներն պիտի վերադարձնեմ – պարզապէս անոր համար որ խմբագրութիւնս չի ցանկար առանց կանխաւ յանձն առած ձեռագրական ցուցակներու հրատարակութեան, ընդունիլ իւր էջերու մէջ նման նիւթեր – եթէ բովանդակութեամբ նորութիւններ չեն: Ունինք հրատարակելի Սեբաստիոյ ցուցակին մասերն եւ Չմմառի ձեռագիրներու<sup>24</sup> ցուցակը (իբր 500 ձեռագիր), դարձեալ Անկիւրիոյ, Կեսարիոյ եւ Կարնոյ<sup>25</sup> ձեռագիրներու ցուցակներ: Շատ ուրախ պիտի ըլլայի, եթէ այլուր ունենայիք դիւրութիւն հրատարակելու:

Պիտի խնդրէի, որ մերժուած չընդունէիք իբրեւ նշանակ նուագման մեր բարեկամական զգածմանց:

Որովհետեւ «Հանդէս ամսօրեայ» կը բաղձայ մնալ իւր բարձրութեան վրայ, հրատարակել իւր էջերու մէջ բանասիրա-

կան ուղղութեամբ նոր աշխատանքներ, չի կրնար յանձն առնել նաեւ ընդունիլ այնպիսի գործեր, որոնք միանգամ դրուած են հրատարակի վրայ, որչափ ալ նորը ունենայ առաւելութիւններ հնոյն վրայ:

Յուսով եմ թէ տողերուս իմաստը չի հասկցուիր չարաչար:

Շնորհակալութեամբ եւ ուրախութեամբ ստացանք Ձեր երկու նոր աշխատանքներն առանձին տպագրութեամբ: Կը մաղթեմ որ օր աւուր աճի անոնց թիւը:

Անցեալները աչքէ անցուցի Ձեր սեպական ձեռագիրներու ցուցակին քովս գտնուած անտիպ մասերը, հետաքրքրեց զիս այն ձեռագիրը, զոր անուանած էք Խոսրովի Մեկն. Աղօթից (ժամագրոց)<sup>26</sup>. պիտի փափագէի ունենալ անոր աւելի մանրամասն նկարագիրը: Կը հաճիք հաղորդել ինձ ձեռագրին բովանդակութեան մասերը.

1. Մեկն. Աղօթից. էջ 1-243. սկիզբը (2-3 տող) եւ վերջը (3-4 տող) եւ հեղինակին յիշատակարանը:

2. էջ 244-250. Յղ. կարգաց եկեղեցւոյ Մովսիսի քերթողահաւերն..... խորագիրն ճշդիւ, սկզբնաւորութիւն, բաժանումները եւ վերջին տողերը:

3. էջ 250-8. Խօսք տեսնու Բարսղի... խորագիրն, սկիզբն, վերջն եւ բաժանումները՝ եթէ կան:

4. էջ 258-93. Յաղագս քառասնորդաց պահոցն. սկիզբն եւ վերջը:

5. էջ 293-344. Մեկն. Ստեփի Սիւնեաց քերթողի. մանրամասն, սկ., վերջ եւ մասեր:

6. էջ 344-73, 373-392, 392-413, 413-24, 424-42. Իւրաքանչիւրին սկիզբն, վերջը, շատ մանրամասնութեամբ: 442-480. խորագիր, սկ. եւ վերջ եւ բովանդակութիւն: Եթէ տաք պահանջուած նկարագրութիւնը ճշդիւ եւ մանր, կարող եմ հրատարակել: – Կարելի՞ էր ստանալ ձեռագ-

րիս լուսանկարը leika ֆիլմ առնուածքով: Ինձի համար շատ կարեւոր է բովանդակութիւնը ամբողջ ձեռագրին: Պիտի խնդրէի նաեւ Տօմար 1341 թղ. 86բ-95, 108ա, 123ա-27բ մանրամասն եւ յառաջբերումներով<sup>27</sup>:

Միշտ սիրով եւ ողջունելի՝  
Հ. Ն. Ակիւնեան

Է.

Վիեննա, 28 Սեպտ. 1934

Սիրելի բարեկամ

Ձեռ մեղադրեր զՁեզ, որ Դուք սրտմտած էք իմ վրաս... իր կարգին ես ալ նոյնպէս պիտի ընթանայի, երբ տեսնէի բազմիցս գրած նամակներուս այսքան յապաղեալ պատասխանը: Մեղաւոր եմ: Բայց մեղքը բազմաթիւ զբաղումներուս, որոնք կաշկանդած ձեռքերս եւ ոտքերս, թոյլ չեն տար ոտի ելանել, ազատ շունչ առնել, բարեկամներուս յայց ելլել մտքով եւ սրտով, անոյշ զրոյցի մէջ մտնել անոնց հետ: Նամակներդ սեղանիս վրայ կուտակուած կը կենային ի թիւս այլ բազմաթիւ թղթակցութեանց: Այսօրուանը վաղուան ձգելու մոլութիւնը պատճառն է ամէն չարեաց: Փակենք այս մեղքերու տոպրակը:

1. Կը յայտնեմ նախ իմ շնորհակալութիւնս Ձեր սեպհական ժամագրոց մեկնութիւն ձեռագրէն կատարուած արտագրութեան համար: Ճիշդն ըսեմ դեռ չունեցայ ժամանակ ստուգելու, թէ այս հատուածը ծանօթ է Սահակ վ. Ամատունու, որ կատարած է Ստ. Սիւնեցոյ ժամագրոց մեկնութեան ծանօթ հատուածներ[ու հրատարակութիւն]ը<sup>28</sup>: Բայց եւ այնպէս յոյժ հետաքրքրական է Ձեր արտագրութիւնը, եւ փափագելի էր ունենալ ինչպէս այս, նոյնպէս Յովհ. Օձնեցոյ հատուածը ամբողջութեամբ: Ինձ աւելի հաճելի պիտի ըլլար, եթէ բարի գտնուէիք ձեռագրին այս մասերը Leika լուսանկարչական գործիքով ֆիլ-

մի վրայ առնել եւ ինձ ուղարկել, ես ունեմ վանքը մեծցնելու գործիք: Այսու թէ արտագրութեան աշխատանքը պիտի խնայուէր եւ թէ լուսանկարումն աժան պիտի նստէր: Նոյն եղանակաւ պիտի փափագէի ունենալ 1341ին գրուած Տօմարին լուսանկարումը: Այն հաւատքով եմ, թէ այս հին Տօմարներու մէջ հնարաւոր պիտի ըլլայ դուրս բերել Անդրէասի եւ Անանիա Շիրակացոյ Տօմարներու մասերը: Ասոնց հրատարակութիւնը կը կարօտի մանր քննութեան, եւ ես չեմ բաղձար առանց համեմատական քննութեան լոյս հանել բնագիրները:

2. Թաթոս Թոխաթեցոյ մասին գրածս փոքրիկ բան մըն էր, ի լրումն Պոտոլրեանի յօդուածին, առանձին լոյս չէ տեսած: Եթէ կայ յիշեալ թիւը առանձին, կ'ուղարկեմ սիրով: Բայց ես գրած եմ ընդարձակ նոյն Թոխաթեցոյ մասին տակաւին ձեռագիր<sup>29</sup>:

3. «Քուչակեան նոր տաղաշարք մի»<sup>30</sup>, գոր հրատարակած էիք Բզմ. 1932 եւ օրինակ մի արտատպութեան ուղարկած, ծանօթ էր արդէն, քանիցս հրատարակուած, ձեռագիրներէն ոմանք կ'ընծայեն զայն Յովհ. Երզնկացոյ, այլք՝ Յրիկին, կայ նաեւ անանուն: Ինչ ինչ տուններ կը գտնուին նաեւ «Քուչակեան» տաղաշարքերուն մէջ, ինչպէս տեսած էք արդէն: Հեղինակն հաւանօրէն Յովհ. Երզնկացին է:

4. Երեմիա Քէօմուրճեանի մասին Ձեր յօդուածները<sup>31</sup> թէեւ ծանօթ էին ինձ եւ մտադիր էի նկատի առնել, բայց վերջին պահուն վրիպեր էին ուշադրութենէս: Մանրամասն խօսած եմ արտատպութեան մէջ, որ լոյս պիտի տեսնէ մօտ ժամանակս, օրինակ մը կ'ուղարկեմ Ձեզ ժամանակին: Իրաւունք ունիք. Երեմիայի կը պատկանի աշխատութիւնը: Իսկ «Երանեալ կոյս» տաղն, որմէ օրինակ մը ուղարկած էիք, ծանօթ է շատ ձեռագիրներէ, նաեւ տպագ-

րութեամբ: Շնորհակալութիւն Ձեր ուշադրութեան համար:

5. Ձեր «Վիշապն» եւ «Հայ եւ արաբ գեղ. յարաբերութիւնները»<sup>32</sup> ստացած ենք շնորհակալութեամբ: Ծանուցումը պիտի գայ Հանդէսի մէջ: Ծանուցմանց բաժնին մէջ չէր դրուած, որովհետեւ նպատակ կար «Մատենագիտութեան» բաժնին մէջ գետեղել, որուն մասնագէտը չյաջողեցաւ աւարտել գործը:

6. Ձեր յօդուածները կը վերադարձնեմ ընդ թղթոյս առանձին ծրարով, անոնք յարմար չեն «Հանդիսի»: Ձեռագրաց ցուցակներ ժամանակէ մը ի վեր դուրս կը մնան ուսումնասիրութիւն տեղւոյ անձկութեան պատճառաւ: Իսկ «Շապուհ Բագրատունիէն» հաւաքուած նիւթերը<sup>33</sup> մասնաւոր հետաքրքրութիւն չեն կրնար շարժիլ: Գրախօսականն ալ չի շօշափեր մասնաւորապէս Հայաստանի նուիրուած նիւթ մը<sup>34</sup>: Տեղւոյ անձկութիւնն եւ խմբագրութեանս տրամադրութեան տակ գտնուած յօդուածները կը ստիպեն մեծ հոգատարութեամբ ընտրութիւն ընել նիւթի: Հայագիտութեան համար նորութիւններ պէտք է տալ «Հանդէսը», որ մեծ զոհողութեամբ լոյս կը տեսնէ:

7. Պիտի յայտնեմ թէ ի վիճակի չէ «Հանդէսի» խմբագրութիւնը ձրիաբար տրամադրել իւր ուսումնասիրութը, որուն բաժանորդներն յոյժ յոյժ սակաւաթիւ են: Առաջարկուած ձեռագիրները չեն շահագրգռեր զմեզ փոխանակութեան համար: Պիտի հաճէիք առ այս տրամադրել մեզ Տաղարանը, ժամագրոց մեկնութիւն եւ Տօմարը<sup>35</sup>, 1933-1942 տարիներու փոխարէն: Նկատելով որ ձեռագիրները Հիմնարկութեան մը մէջ պիտի պահուին, մատչելի ամէն գիտնականի, որ պիտի հետաքրքրուի անոնցմով, կը համարիմ թէ ծանր պիտի չերեւայ Ձեզ հրատարիլ անոնցմէ, փոխարէն «Հանդէսի» մէջ յագեցնելով Ձեր հայագիտութեան ծարաւը:

Կը համարիմ թէ Ձեր բոլոր հարցերուն պատասխանեցի ըստ կարելոյն, որքան այժմ միջոցներս եւ յիշողութիւնս ներեցին: Այժմ կը գտնուիմ օդափոխութեամբ գիւղ, ուր մտադիր եմ մնալ մինչեւ Հոկտ. 15: Երբ վերադառնամ քաղաք, կը փոխադրեմ Ձեզ «Հանդէսի» 1932 թ. 5-6: Պէտք է ըսեմ, որ խմբագրութիւնս յիշեալ թիւերը դրկած է անգամ մը եւ չէ ստացած յետս, ուստի ուրիշ անգամներ, երբ բացակայիք քաղաքէն, պէտք է վստահելի անձի մը յանձնարարէք, որ պահէ առաքումները զգուշութեամբ:

Այսքան պաշտօնական:

Շատ ժամանակէ ի վեր պարտականութիւնը կը զգայի յայտնելու Ձեզ իմ շնորհակալութիւն եւ ուրախութիւնը Ձեր ամուսնութեան եւ առաջին ծնունդին՝ Հերագանգուր Հայկի<sup>36</sup> աշխարհի լոյսը ողջունելուն համար: Մաղթանքս է որ ամենաբարին Աստուած օրհնէ Ձեր պսակն եւ յաջողէ յերջանկութիւն, նոյնպէս Ձեր զաւակին պարգեւէ արեւշատութիւն, ծլի, ծաղկի եւ պտղաբեր լինի յուրախութիւն ծնողաց եւ յատկապէս ի պարծանս հայոց զարմին: Կայժ մի Ձեր հայրենասիրութենէն թող վառի անոր սրտին մէջ եւ հրդեհէ անոր անձը, ըլլալու փառք հայութեան:

Իմ աշխատանքներու ընթացքը պիտի տեսնէք «Հանդիսի» մէջ: Շատ բան ունեմ ուսումնասիրած եւ ուսումնասիրելի, բայց սուղ է ժամանակը, կոկելու ուսումնասիրածը եւ ի գլուխ հանելու ուսումնասիրելին: Բաց ի գրական աշխատանքներէ հարկ է տեսնել կարգ մը վարչական գործեր, որոնք կը պահանջեն ժամանակ: Ինչպէս շատերը, նոյնպէս ես ինքս կը զարմանամ թէ ինչպէս այսքան գործերու մէջ հնարաւոր կըլլայ միւլ բանասիրական աշխատութեանց: Պարտքի գիտակցութիւնը կու տայ սակայն մղում: Դու մի նեղանար եթէ թղթակցութիւնք ամէն անգամ իրենց կանոնաւոր ընթացքը չէին ըներ: Տրտունջը

միայն Ձեր կողմէն չէ: Անձնապէս ոչ մի պատճառ չունիմ Ձեզ հետ գէշ ըլլալու, որովհետեւ ինձ ոչ մի ցաւ չէք պատճառած, ընդհակառակը տուած էք առիթ շնորհակալութեան եւ երախտագիտութեան:

Միշտ սիրով եւ յարգանքներով՝  
Հ. Ն. Ակիւնեան

Հ. Հ. ՈՍԿԵԱՆԻ ԲԱՑԻԿՆԵՐԸ

1

Վիեննա. 17 III 1927

Յարգելի պարոն

Ընդունած եմ Ձեր 26 II 1927 թուակիր պատուականը եւ բաց աստի 5 դոլար, զոր անցուցի ի բաժանորդագիրն Հանդէսի 1924 եւ 1925 տարիներու. մէն մի տարւոյն տալով 2.50 դոլար, թէեւ մէկ տարին կ'արժէր 4 դոլար, հետեւաբար ի միասին 8 դոլար: Այս այսպէս ըրի, որովհետեւ երբեմն երբեմն ազնուօրէն մեզի թերթեր կը զրկէք եւ նաեւ յօդուածներ կը գրէք: Ձեր վերջին յօդուածն առած ենք, ժամանակին յուսով եմ կը տպենք: Արբահամու Ստամպոլայ տաղը ծանօթ է եւ տպուած<sup>37</sup>: Կրկնագիր ձեռագիր կարդալու միակ անպարսաւ միջոցն է լուսանկարելը: «Ապագայ» թերթի մասին (ի Պուլգարիա) տուած Ձեր տեղեկութիւնները շատ հետաքրքրական էին: Ո՛րքան շնորհակալ պիտի ըլլանք Ձեզ, եթէ սոյն թերթը մեր Մատենադարանին նուիրել հաճէիք:

Ի՞նչ գիրք եւ ո՞ր դարէն է Ձեր կրկնագիր ձեռագիր<sup>38</sup>, ի՞նչ գնով կամ փոխանակութեամբ կ'ուզէք զայն վաճառել:

Հանդէսի Ձեր ունեցած պակասներէն մաս մը կը զրկենք, քանի որ անոնց տարեկան դրամն ստացած ենք: Կը զարմանանք թէ ի՞նչպէս զանոնք չէք ստացած: Մենք առաքումը կատարած ենք: Հանդէսի 1926ի պակասներն ու 1927ը կը ստանաք

այն ատեն երբ բարութիւնը կ'ունենաք բաժնեգիրը զրկելու, վասն զի այլ եւս այն կանխիկ է: Կարելի է նաեւ փոխանակութեան վրայ մտածել:

Խորին] յ[արգանօք]  
Հ. Հ. Ոսկեան

2

Վիեննա 20-6-67

Յարգելի բարեկամ

Յովհաննէս Կոզեռնի մասին Ձեր յօդուածը ՀԱ.Ի 1967 թ. 1ի մէջ<sup>39</sup> քանի մը օրէն լոյս կը տեսնէ, ուստի կը խնդրեմ նոր յօդուածներ եւ գրախօսականներ:

Ձեր մէկ գրախօսականը վրացական մանրանկարչութեան<sup>40</sup> մասին բացակայութեան հասած է Վիեննա եւ սակայն չէ շարուած, զի ռուսերէն անուանագիրը կամ տիտղոսը ռուսերէն հեղինակին անունով չէք գրած: Արդ, հաճեցէ՛ք փութով անոր ռուսերէն անուանագիրն ու տպագրութեան տեղւոյն անունը մեզի հաղորդել: Նաեւ շատ գոհ պիտի ըլլայինք, եթէ Ձեր բարեկամ պրոֆ. Աբուլաժէ<sup>41</sup> անկէ օրինակ մեր [մը] Մատ[ենադարան]ին յղել հաճէր:

Կրնայի՞ք անոր հասցէն մեզի յղել:  
Խորին] յ[արգանօք]  
Հ. Հ. Ոսկեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Տե՛ս Յ. Քիրտեան [հրատ.], Նամակներ Գարեգին Սրբազան Յովսէփեանէն, «Հասկ», 1967/ԺԲ., էջ 521-7, 1970/Ը-Թ., էջ 343-9, 1972/Ե-Զ., 217-27:
- 2 Ինչպէս ցոյց են տալիս մեր ծանօթագրութիւնները, ժամանակ անց Քիրտեանը նոյն յօդուածները տպագրել է «Բազմավէպ»-ում, մէկն էլ՝ «Սիրոն»-ում:
- 3 Նկատի ունի, ըստ ամենայնի, Քիրտեանի «Նիւթեր Պուլկարահայոց պատմութեան համար» յօդուածը, որ հետագայում տպագրուել է՝ «Բազմավէպ», 1924/ԺԱ., էջ 362-4, ուր արծարծուել են Պաշկովոյի վանքին եւ Գրիգոր Բակուրեանին

վերաբերող հարցեր, որոնց շարքում նաեւ՝ Մատթէոս Ուոհայեցու հաղորդումը՝ «Բագրատ հայրն Սմբատայ եւ Գրիգոր Բակուրեանի որդին՝ Վրացի ազգաւ» տե՛ս Մատթէոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, Բ. տպագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 148:

4 Տե՛ս Ղ. Վ. Յովհաննէան, Հետազօտութիւնք անհնետաց ռամկօրէնի վրայ, Մասն Ա., տետր 1-2, Վիեննա, 1897 (Ազգային մատենադարան, ԻԳ. եւ ԻԴ.):

5 Խօսքը պատմականութեան շրջանում Քիրտեանի հրապարակած ձեռագիր թերթի մասին է:

6 Էջահամարների համար տեղ թողած՝ չգրած. յօդուածն այս է՝ Հ. Մ. Պոտուրեան, Պաղտասար Դպիր, «Բազմավէպ», 1912/Ը-Ը-Թ. էջ 334-9:

7 Թուարկուած առաջին երեքը «Հանդէս ամսօրեայ»-ում շարունակաբար տպագրուելուց յետոյ հրատարակուել են նաեւ որպէս առանձին գրքեր. 1. Յուցակ հայերէն ձեռագրաց Արծնեան վարժարանի եւ Կարնոյ գիւղերու, կազմեց՝ Հ. Յակոբ վ. Քօսեան, Վիեննա, 1964, [ԺԱ.]+131 էջ. նկարագրել է 62+33=95 ձեռագիր. 2. Յուցակ հայերէն ձեռագրաց Սուրբ Նշանի վանոց ի Սեբաստիա, կազմեց թորգոմ արքեպ. Գուշակեան, Վիեննա, 1961, [ԺԷ.]+140 էջ. նկարագրել է 283 ձեռագիր. վերջին՝ 155\_283 ձեռագրերի նկարագրութիւնների համառոտումներն արել է Ն. Վ. Ա. կիսնաւը. 3. Յուցակ հայերէն ձեռագրաց Թեհրանի, կազմեց Հրաչեայ Յ. Աճառեան, Վիեննա, 1936, VI+17 էջ, նկարագրել է 9 ձեռագիր: Վերջինը չի տպագրուել, երեւի որովհետեւ արդէն հրատարակուած էր հետեւեալը՝ Բաբգէն աթոռակից կաթողիկոս [Կիւլէսերեան], Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանոց եւ շրջակայից, Անթիլիաս, 1957. ԺԳ+1518 սիւն, նկարագրել է 323 ձեռագիր:

8 Արծարծուող առաջին ձեռագրի (թիւ 4 Մաշտոց) ներկայ համարը դժուար է պարզել (Քիրտեան հաւաքածոյի մէջ կայ 22 Մաշտոց, իսկ այժմեան թիւ 4-ը Աւետարան է), Տաղարանը անկասկած թիւ 85-ն է՝ Կ. Պոլիս, ՌժԻԶ., ՌժԸ. - 1678 (թ. 1-34), 1681 (թ. 35-173). գրիչ՝ Յովհաննէս երէց, մեկնասու եւ ստացող՝ տիրացու Մանուկ՝ որդի Պուրասցի մահտեսի Յակոբի:

9 Այս նախադասութիւնը գրուած է նամակի առաջին էջի ձախ լուսանցում, վերից վար, եւ նոյն էջի շարադրանքին չի կապուում, ուստի որեցի՞նք պատշաճող այս տեղում:

10 Խօսքը վերաբերում է բանասէր-մանկավարժ Կարապետ Կոստանեանցին (ծն. 1853, Ալեքսանդրապոլ - վախճ. 1 Ա. 1920, Մոսկուա) եւ նրա հետեւեալ հրատարակութիւններին. Մկրտիչ Նաղաշ եւ իւր տաղերը. Յաւելուած՝ Միջնադարեան տաղեր դարիպութեան վրայ, Վաղարշապատ, 1898 (57 էջ). Գրիգորիս Աղթամարցի եւ իր տաղերը. Յաւելուած՝ Ալեքսանդրի

պատմութեան կաֆաները, Թիֆլիս, 1898 (126 էջ). Նոր ժողովածու. Միջնադարեան հայոց տաղեր ու ոտանատրներ, պրակ Ա-Դ., Տիֆլիս, 1892-1903:

11 Տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, հրատ. Գիտաւագ քահանայ Աղանեանց, Գիրք Ա-ԺԳ., Թիֆլիս, 1893-1917 (գիրք Ը՝ 1908, Թ՝ 1911, Ժ՝ 1912):

12 Տե՛ս Յ. Քիրտեան, Նիւթեր Պուլկարահայոց պատմութեան համար. Թաթար Բազարճըքի հայ գաղութը, «Բազմավէպ», 1929/Ա., էջ 12-7:

13 Մնացել է անտիպ. այժմ արժէ համեմատել յիշատակարանների տպագրուած տաս հատորների հետ եւ երեւի մի հատորով հրատարակել վերջիններիս մէջ բացակայող միատրները:

14 Joseph Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918.

15 Հ. Գարեգին Գարսնֆիլեան՝ 1877-1955. Հ. Ն. Ակիսեանի գրած մահախօսականը տե՛ս ՀԱ, 1955, էջ 93-94:

16 Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Երուանդ Լալայեան, հրատարակութիւն Հայոց ազգագրական ընկերութեան, պրակ Ա., Թիֆլիս, 1915. 6 էջ+1048 սիւն. նկարագրել է 480 ձեռագիր:

17 «Բիւզանդիոն» հայաթերթ ամենօրեայ, Կ. Պոլիս, 1896-1918 թթ., 1446-րդը 1901 թ. Յուլիսի 2-ի համարն է:

18 Երեւի հետեւեալն է՝ Յ. Քիրտեան, Հայկական հնութիւնք ի Պաղտաս, «Սիրոն», 1931, էջ 56\_60:

19 Քիրտեանի՝ մեզ յայտնի հրատարակումների մէջ առածն այսպիսի Աւետարանի նկարագրութիւն չկայ:

20 Տե՛ս ծնթ. 7:

21 Տե՛ս Յ. Քիրտեան, Յուցակ հայերէն ձեռագրաց անձնական մատենադարանին Յարութիւն Քիրտեանի ի Ուիչիտա, Կանսաս, - ՀԱ, 1929, էջ 208-20: Նկարագրել է 5 ձեռագիր՝ Աւետարան (1666 թ.), Աւետարան (ԺԶ\_ԺԷ. դդ.), Աւետարան (ԺԵ\_ԺԶ. դդ.), Աղթամարցի (1757 թ.), Աղթամարցի (1820 թ.):

22 Հ. Ն. Ակիսեանի խնդրած տաղերի խորագրերը ճշտելը դժուար է. ամենայն հաւանականութեամբ թիւ 85 Տաղարանի մեր եւ նրա ունեցած նկարագրութիւններում տաղերի կարգային համարները նոյնական չեն:

23 «Նշոյլ» ամսագրոյ, Նիւ Եօքք, 1919 թ., խմբագիր-հրատարակիչ Փառէն քոյ. Աւետիքեան:

24 Յուցակ հայերէն ձեռագրաց Չմմտի վանքի մատենադարանին, հտ. Բ. «Անտոնեան հաւաքածոյ», կազմեցին Հ. Ն. Վ. Ակիսեան եւ Հ. Հ. Վ. Ոսկեան, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1971. Դ+322 էջ. նկարագրել է 210 (թիւ 423\_632) ձեռագիր:

25 Անկիրիոյ եւ Կարնոյ ձեռագրերի ցուցակների համար տե՛ս ծնթ. 7. իսկ Կեսարիայինը հետեւ-

ւեալն է՝ Յուդայի հայերէն ձեռագրաց վաճառից Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա, կազմեց Տրդատ եպ. Պալեան, Վիեննա, 1963. ԺԲ+88 էջ. Ակարագրել է 44+4=48 ձեռագիր:

26 Խօսքը վերաբերում է Քիրտեան թիւ 40 ձեռագրին՝ Կիլիկիա՝ Ադանա, Բարձրբերդ, ՌԾԴ. - 1605. Գրիչ՝ Գրիգոր երէց, Բաղտասար դպիր, մեկեանս, ստացող՝ Յովհաննէս կաթողիկոս:

27 Անկասկած, Ակատի ունի Քիրտեան թիւ 89 Ժողովածուն՝ [Կիլիկիա], 2Դ. - 1341 թ., գրիչ՝ Յովհաննէս, նորոգման գրիչ՝ Նիկողայոս, որ ունի տոմարական ուշագրա մաս:

28 Սահակ վ. Ամատունի, Ժամակարգութեան մեկնութիւն ընդարձակ եւ համառօտ Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ նորին պատճառ հիմնարկութեան եկեղեցւոյ, Էջմիածին, 1917, էջ 78:

29 Տե՛ս Լ. Ն. Ակիմեան, Թաղեոս վ. Կողոմիացի (Թոխաթեցի), աշակերտ Մաղաքիա Դերջանցւոյ, տաղասաց, ԺԶ. դար, - ՀԱ., 1953, 53-65 (Ազգային մատենադարան ՄԵ.):

30 Յ. Քիրտեան, Քուչակեան նոր տաղաշարք մը (Միջնադարեան հայ տաղասացութեան համար), - «Բազմավէպ», 1932/Ժ-ԺԱ., էջ 464\_72 (Երուսաղէմի 2323 ձեռագրից):

31 Տե՛ս Յ. Քիրտեան, Նիւթեր Պուկարահայոց պատմութեան համար. Վաւերագրութիւն մը [Երեմիա Քէօմիւրճեանի], - «Բազմավէպ», 1929/ԺԱ\_ԺԲ., էջ 345\_8. նաեւ՝ Նիւթեր Պուկարահայոց պատմութեան համար. Յիշատակարան մը [Երեմիա Քէօմիւրճեանի] 1677էն Տիլիպէի Ս. Գեորգ եկեղեցւոյն վրայօք, - «Բազմավէպ», 1930/Դ., էջ 161\_6:

32 Տե՛ս Յ. Քիրտեան, Վիշապը հայկական գորգերուն մէջ (Նաեւ Փիւնիկ եւ Արծիւ) [եւ]՝ Վիշապը

հայկական գորգերուն մէջ (Փիւնիկ թէ Արծիւ), (Ուսումնասիրութիւններ հայ գեղարուեստի պատմութեան համար), - «Բազմավէպ», 1931/Զ., էջ 259-64. Է\_Ը., էջ 300-4. Թ-Ժ., էջ 417\_25. ԺԱ., էջ 473-8: Նաեւ՝ Հայ եւ արաբ գեղարուեստի յարաբերութիւնը, - «Անահիտ» (Փարիզ), 1932/Է-Ժ., թիւ 1-2, էջ 57-81:

33 Քիրտեանի տպագիր գործերի շարքում այսպիսի միատր չգիտեմք:

34 Ակնարկուած գրախօսութեան՝ ի՛նչ գրքի վերաբերելն անգուշակելի է:

35 Բաժանորդագրի դիմաց Քիրտեանի առաջարկած ձեռագրերի ինչ լինելը նոյնպէս հնարաւոր չէ ենթադրել, իսկ Լ. Ակիմեանի ցանկացածները, ինչպէս արդէն տեսանք, Քիրտեան հաւաքածոյի ներկայ 40 (Ժամագրոց մեկնութիւն), 85 (Տաղարան) եւ 89 (Տոմար) համարներն են:

36 Խօսքը Յ. Քիրտեանի աւագ որդու՝ Հայկ Քիրտեանի մասին է, կրտսերը Գրիգոր Քիրտեանն է:

37 Նկատի ունի Արրահամ Անկիւրացու «Վասն ամանն Ստամպոլայ» հանրայայտ չափածոն:

38 Խօսքը Քիրտեանի թիւ 1 ձեռագիր Աւետարանի (ԺԲ. դ. վերջ) մասին է. կրկնագիր են սրա 1-15, 48, 192 թերթերը:

39 Տե՛ս Յ. Քիրտեան, Յովհաննէս վարդապետ Կոզեռն, - ՀԱ., 1967, էջ 1-16:

40 Երեմի Յ. Քիրտեանի գրախօսութիւնն է հետեւեալ գրքի՝ Ամիրաշիլի Ծալու, Վրացական մանրանկարչութիւն (նուսերէն), Մոսկուա, 1966, 72+126 էջ, - «Բազմավէպ», 1967/Զ-Ը., էջ 179\_82:

41 Նկատի ունի վրացի հայագետ-բանասէր Իլիա Աքուլաձէին (1901-1968 թթ.):

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Նիկոլ Աղբալեան, Նամակներ. պաշտօնական գրութիւններ, 2003

Այս հատորը Նիկոլ Աղբալեանի անունով Հայաստանի մէջ լոյս տեսած առաջինն է: Աղբալեան՝ Ի. դարու Հայ մշակութի պատմութեան հետաքրքրական դէմքերէն մէկը, Սփիւռքի «Հիմնարար առասպել»ի դերակատարներէն մէկն ալ եղած է: Թող չակերտուած բառերը տարօրինակ չթուին: Ութսուն տարուան ընթացքին, Վենետիկի երբեմնի Մուրատ-Ռափայէլեան վարժարանի նախասփիւռքէն եկող աւանդին զուգահեռ, կարելի է պնդել, թէ Սփիւռքի մէջ Հիմնարար եղած են անոր սկզբնական տարիներուն՝ 1920ական թուականներուն Հիմնուած Համագգայինի Նշան Փալանճեան ճեմարանը եւ Հ.Բ.Ը.Մ.ի Մեղգոնեան Կրթ. Հաստատութիւնը: Այսօր, երբ ձեմարանի Հին շէնքը նիւթական պարագաներու բերումով փակուած է, իսկ Մեղգոնեանը գոցելու անխորհուրդ որոշումը գործադրութեան մէջ կը դրուի, կ'արժէ վերստին մտածել այս երեք Հաստատութիւններուն դերին մասին եւ ո՛չ թէ նահանջական տրամադրութիւններ ունեցնել կամ խորհիլ, թէ Հայաշխարհի բոլոր չարիքներուն լուծումը կը գտնուի, օրինակ, այսպէս կոչուած ի «Նահանգն Ոսկեայ», յարեմտեան ափն Ամերիկայի:

«Առասպել» ըսինք, որովհետեւ այդ դերը, թող որ շատ կարեւոր, ժամանակի անցքով միշտ ենթակայ է առասպելականացումի: Ասիկա բնական է, քանի որ այդ կրթական օճախներուն մղիչ ուժերուն կեանքն ու գործը նոյնպիսի առասպելի մը վերածուած է՝ գիտական պրպտումի բացակայութեան դէմ յանդիման: Այս ալ, ի վերջոյ, կամայ թէ մանաւանդ ակամայ նոյն Հաստատութիւններուն Աքիլլեսեան

գարշապարը եղած է: Երեք վարժարաններէն ելած հոյլ մը մշակութային ու հանրային դէմքեր Սփիւռքը Հասցուցած է մինչեւ մեր օրերը: Բայց, յարակարծօրէն, անոնք չեն տուած (Սփիւռքի «պաշտօնական» քաջալերութեան չգոյութեան պայմաններու մէջ) հարկ եղած թիւով ու որակով բանասէր ու Հայագէտներ, որոնք, օրինակ, Սփիւռքի ակունքներուն քննութիւնը կատարէին: Դժբախտաբար, իրականացած չէ 1934ին Աղբալեանի կողմէ Համաստեղին արտայայտուած բաղձանքը, թէ «ես կ'ուզէի, որ այս Հիմնարկութիւնը [ճեմարանը. Վ.Մ.] Հայագիտութեան աշխարհական օջախ լինէր Ասիական այս ափին. [...] չկար մի Հաստատութիւն, որի հովանու տակ աշխարհական մարդը Հմտանար իր անցեալին եւ աշխարհիկ գիտութեան ընդհանուր գաղափարներով լուսաւորէ այդ անցեալը: Հայաստանի Համալսարանը կատարում է այդ գործը թէեւ ծանր պայմանների մէջ. ես կ'ուզէի, որ ճեմարանը արտասահմանի մէջ այդ նոյն դերը կատարէր աւելի լաւ պայմաններում» (Նամակներ, էջ 171. ընդգծումը բնագրային է):

Չենք ուրանար մեր նշած ուղղութեամբ կատարուած աշխատանքը, օրինակ՝ յետմահու հրատարակուած Աղբալեանի քառահատոր «Ամբողջական Գործեր»ը (1959-1970): Սակայն, Սփիւռքի մէջ կէս դարու ընթացքին պակասած է փաստահաւաքչական եւ մեկնողական ճիգը, ի շարս այլոց Աղբալեանի կենսագրութիւնը գրելու, նամականին հրատարակելու, մամուլի մէջ դեռ մնացած էջերը Համախմբելու եւ այլ յարակից գործերով զբաղելու: Մինչեւ այսօր բացակայ է բոլոր կենսա-պատմական փաստերը Համադրող ու մեկնող Հա-